տաւորէն և զճարտարապետ քաղաքին. և եղեւ 'ի հասանիլ նոցա անդ՝ գտին զորմն վանաց ծերեալ ներքոյ եւ արտաքոյ և զպատուսպարանս 'ի վերայ պարսպին քարուկիր։ Եհարց Էյուպ աղա ցճարտարապետն թէ՝ գտանի՞ աւելի ինչ քան զնախկին չինուածն, և նա ասէ՝ ոչ, Եհարց նա և ցայլազգիսն Սիոնի. զնոյն պատասխանիս՝ ետուն և նոքա. ապա յաւելին ասել՝ թէ ոչ երբէք վնաս հասեալ է մեզ 'ի քրիստոնէից՝ որք բնակին 'ի վանդ, և ոչ 'ի մէնջ առ նոսա։ Յետ այսր քննութեան՝ դարձան առ դատաւորն և պատմեցին նմա, և նորա 'ի գրի հարեալ զամենայն ինչ առաքեաց առ կուսակալն 'ի ձեռն Էյուպ աղայի, ١٠٢٤ (1615)։ Յետ այսր երկար դատաստանաց եւ քննութեանց դարձեալ ոչ կարացին զերծանիլ Հայք 'ի ձեռաց այլազգեաց. ուստի հարկ եղեւ նոցա ստիպել ըզդատաւորն ծանուցանել զեղեալսն 'ի Դուռն. վասն Սուրբ Փրկչի և Հրեշտակապետի վանօրէից, և խնդրել հրովարտակ յԱրքայէ. զի թերեւս կարասցեն զերծանիլ այնու 'ի բռնութեանց այլազգեաց. և նա կատարեաց զխնդիրս նոցա, ١٠٢٥ (1615)։

---

## Գ Լ Ո Ւ Խ Խ.

Գմբեթն Համբարձման եկեղեցւոյն։ Վէճ Լատինաց ընդ Հայոց. տակս այրին Մենդեան Քրիստոսի. եւ Պատանատեղւոյն։ Ամբաստանութիւնք նոցին 'ի Դուռն ալքայի. և դարձեալ խռովութիւն տակս այրին Մենդեան. և մերժումն Հայոց յայրէ անտի։

Մի ոմն յայլազգեաց Երուսաղէմի՝ 'ի սերնդոց Ալէդ կոչեցեալ Շէյխին, 'ի կենդանութեան իւրում կամեցաւ չինել և պատրաստել զգերեզման իւր 'ի ներքոյ գմբեթի Համբարձման ոտնատեղւոյն Քրիստոսի. լուեալ զայս Գրիգորի պատրիարքի և միաբանացն Հայոց, 'ի բազում աշխատ եղեն՝ և ջանացին խափանել զնա 'ի խորհրդոց իւրոց, յորմէ կրեցին վիշտս և յանդիմդեցան միասուց. սակայն չ'շահեցան ինչ, և դատաւորն անդամ չկարաց դար-